ԲԱԲ ԱԼ-ՄԱՆԴԵԲԻ ՆԵՂՈՒՑԻ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ «ԵՐԵՔ ԾՈՎԵՐԻ» ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ

Հայկ Քոչարյան
hkocharyan@ysu.am

Բանալի բառեր՝ *Բաբ Ալ-Մանդեբ, «Երեք ծովերի համակարգ», ածխաջրածնային ռեսուրսներ, ստորջրյա մալուխներ, Ջիբութի, Քամփ Լեմոնիեր, ԱԹՍ*

Բաբ Ալ-Մանդեբի նեղուցը, որը կապում է Կարմիր ծովը Հնդկական օվկիանոսի հետ, համաշխարհային ածխաջրածնային ռեսուրսների փոխադրման տեսանկյունից իր նշանակությամբ երրորդ կարևոր հանգույցն է Մալակայի և Օրմուզի նեղուցներից հետո: Հոդվածի նպատակն է քննարկել Բաբ Ալ-Մանդեբի նեղուցի կոմունիկացիոն հնարավորությունները և նրա հանգուցային նշանակությունը «Երեք ծովերի համակարգում»:

Բաբ ալ-Մանդեբի կոմունիկացիոն նշանակությունը

Բաբ Ալ-Մանդեբի նեղուցը, կապելով Կարմիր ծովը Հնդկական օվկիանոսի հետ, դառնում է կարևոր օղակ Միջերկրական ծովով և Սուեզի ջրանցքով Կարմիր ծով դուրս եկող միջազգային կոմունիկացիոն հնարավորությունների իրականացման համար:

Բաբ Ալ-Մանդեբի նեղուցի լայնությունը ամենանեղ հատվածում մոտ 29 կմ է, բացի այդ Բարիմ (Մայյուն) կղզին այն բաժանում է երկու միջանցքի, որից արևելյանի լայնությունը չի գերազանցում 3,5-4 կմ: Միջազգային նավագնացության համար օգտագործվում է միայն արևմտյան միջանցքը, որի լայնությունը

մոտ 25-26 կմ է: Պետք է նշել, որ նավագնացության համար առանձնացված է երկուական 2 մղոն լայնությամբ ծովուղի՝ յուրաքանչյուր ուղղությամբ մեկական: Ծովուղու առավել ծանծաղ հատվածը մոտ 190 մետր է[1]: Պատմության ընթացքում նավագնացության կազմակերպումը այս նեղուցում բավականին դժվար ու վտանգավոր է եղել, ինչի վկան է դարերի ընթացքում նեղուցին արաբների կողմից տրված «Լացի/ողբի դռներ» անվանումը:

Բաբ ալ -Մանդեբի ջրերը ողողում են Եմենի, Էրիթրեայի և Ջիբութիի ափերը: Պետք է նաև նշել, որ վերոնշյալ պետությունների տարածքային ջրերում են գտնվում մոտ մեկ տասնյակի հասնող կղզյակներ ու հրվանդաններ, որոնք հնարավորություն են տալիս այս պետություններից յուրաքանչյուրին որոշակի ազդեցություն ունենալ և լուրջ դերակատարություն ստանձնել Բաբ Ալ-Մանդեբի շահագործման անվտանգության հարցում: Հաճախ կղզիների հանդեպ վերահսկողություն սահմանելը պատճառ է դառնում սահմանային ընդհարումներին: Վերջին լուրջ ընդհարումը արձանագրվել է 2008 թվականին Ջիբութիի և Էրիթրեայի միջև Դոմեյրա կղզյակների շուրջ[2]:

Միջազգային առևտուր/ապրանքաշրջանառություն

Եվրոպայի և Ասիայի միջև ծովային առևտրի գրեթե ողջ ծավալը իրականացվում է Միջերկրական ծով – Սուեզի ջրանցք –

[1] Աշխարհագրական տվյալների մասին առավել մանրամասն տե՛ս Словарь географических названий зарубежных стран / отв. ред. А. М. Комков. 3-е изд., М. : Недра, 1986, с. 31.

[2] Մանրամասն տե՛ս Berouk Mesfin, The Eritrea-Djibouti border dispute, Institute for Security Studies, Situation Report, 15 September 2008

Կարմիր ծով – Բաբ ալ-Մանդեբի նեղուց ճանապարհով: Տարբեր գնահատականներով Բաբ ալ-Մանդեբի նեղուցով տարեկան անցնում է մոտ 700 մլրդ ԱՄՆ դոլարին համարժեք ապրանք[3]՝ դարձնելով այն համաշխարհային առևտրի կարևորագույն հանգույցներից մեկը:

ԱՄՆ Էներգիայի Ինֆորմացիոն Ադմինիստրացիայի տվյալների համաձայն 2013 թվականի համաշխարհային նավթարդյունաբերության արտադրանքի 63%-ը (56.5 մլն տակառ/օր) տեղափոխվել է ծովային ճանապարհներով[4]:

Վերջին տարիների ընթացքում նավթի և նավթամթերքների փոխադրումը Բաբ ալ-Մանդեբի նեղուցով աճել է: 2010 թվականին փոխադրվել է գրեթե 2,7 մլն տակառ/օր, իսկ 2014 թվականի տվյալներով այդ փոխադրումները եղել են մոտ 4,7 մլն տառակ/օր ծավալների հասնող[5]: Նավթի փոխադրումների ծավալների աճը պայմանավորված է եղել իրաքյան նավթի Եվրոպա արտահանման ծավալների աճով: Ի տարբերություն նավթի և նավթամթերքի տարանցման մեծացմանը՝ վերոնշյալ ժամանակահատվածում հեղուկ բնական գազի տեղափոխման ծավալները անկում են արձանագրել, որը պայմանավորված է մերձավորարևելյան խոշոր մատակարարներից Քաթարի դեպի Եվրոպա արտահանման ծավաների նվազման հետ[6]:

---

[3] Shay Sh., The Battle over the Bab al Mandab Straits, 9/10/2016, http://www. israeldefense .co.il/en/content/battle-over-bab-al-mandab-straits (05.11.2016)

[4] World oil transit chokepoints critical to global energy security, December 1, 2014 http://www.eia.gov/todayinenergy/detail.cfm?id=18991&src=email (10.11.2016)

[5] Oil trade off Yemen coast grew by 20% to 4.7 million barrels per day in 2014,April 23, 2015 http://www.eia.gov/todayinenergy/detail.cfm?id=20932 (13.11.2016)

[6] Նույն տեղում:

Նավթի և նավթամթերքի տեղափոխման ծավալներ մլն տակառ/օր 2010-2014[7]					
	2010	2011	2012	2013	2014
Բաբ ալ-Մանդեբ	2,7	3,4	3,7	3,8	4,7

Այս տվյալներից կարելի է տեսնել, որ Բաբ Ալ-Մանդեբի նեղուցի կարևորությունը գնալով աճում է:

Հեռահաղորդակցություն

Եվրոպան Ասիային կապող անդրծովյան մալուխները, որոնցով տվյալների փոխանակում է իրականացնում անմիջապես մոտ չորս տասնյակ երկիր, իսկ միջնորդավորված կերպով դրանցից օգտվում են չորս մայրցամաքի խորքային պետությունները, անցնում են Բաբ ալ-Մանդեբի նեղուցով[8]: Այդ մալուխների մի մասը շահագործվում են մասնավոր կազմակերպությունների, իսկ մյուս մասը համընկերությունների կողմից:

Հարավարևելյան Ասիան Մերձավոր Արևելքով Արևմտյան Եվրոպային (SEA-ME-WE) կապող ներկայում գործող չորս մալուխները անցնում են Բաբ Ալ-Մանդեբով, ինչպես նաև նախատեսված է մինչև 2017 թվականը շահագործման հանձնել Ավստրալիան Եվրոպային կապող հինգերորդ մալուխ, որն ըստ նախագծի նույնպես անցնելու է Բաբ Ալ-Մանդեբով: SEA-ME-WE նախագծի պատմությունը սկսվել է 1985 թվականից՝ անցնելով մի քանի թարմացումներ և համալրվելով նոր մալուխներով:

[7] Տվյալների համար աղբյուր են ծառայել ԱՄՆ Էներգիայի Միջազգային ադմինիստրացիայի զեկույցները:
[8] Submarine Cable Map 2016, http://submarine-cable-map-2016.telegeography.com/ (14.11.2016)

Համանանուն նախագծի երրորդ մալուխից սկսած Արևմտյան Եվրոպան Հեռավոր Արևելքի հետ կապող այս մալուխը դառնում է հեռահաղորդակցության հիմնական զարկերակը:

SEA-ME-WE-3 մալուխի երկարությունը մոտ 39000 կմ է, իսկ հզորությունը՝ 8x2.5 Gbps: Այն անցնում է 33 երկրներով, կապում է 4 մայրցամաք և ունի 39 ցամաքային հանգույց: Բաբ Ալ-Մանդեբի անմիջապես հարևանությամբ ցամաքային հանգույցը տեղակայված է Ջիբութիում, իսկ մյուս մոտակա հանգույցը սաուդական Ջեդդայում է: SEA-ME-WE-3 համարվում է աշխարհում ամենաերկար ստորջրյա մալուխը[9]:

2005 թվականին շահագործման է հանձնվում SEA-ME-WE-4 մալուխը (հզորությունը՝ 2x64x10Gbps), որը Հարավարևելյան Ասիան կապում է Հնդկական թերակղզու և Մերձավոր Արևելքի միջոցով Եվրոպայի հետ (Ֆրանսիա): Մոտ 18000 կմ երկարության այս մալուխն ունի 17 ցամաքային հանգույց և մեկ ցանցի մեջ է միավորում մոտ 15 պետություն: Բաբ Ալ-Մանդեբի մոտակա հանգույցը գտնվում է սաուդական Ջեդդայում[10]:

Բաբ Ալ-Մանդեբի նեղուցով է անցնում շինարարության փուլում գտնվող SEA-ME-WE-5 մալուխը (երկարությունը՝ մոտ 20000 կմ), որն ի տարբերություն նախորդների գերարագ է և նախագծային հզորությունը 3x80x100Gbps է: Այս մալուխը նախատեսված է Եվրոպան Մերձավոր Արևելքով Ավստրալիային կապելու համար[11]: SEA-ME-WE-5 մալուխի ցամաքային

[9] Մանրամասն տես՝ http://www.smw3.com/smw3/SignIn.aspx (14.11.2016)
[10] Մանրամասն տես՝ https://www.seamewe4.net/commonhtm.jsp?htm=htm/about_us.htm (14.11.2016)
[11] Մանրամասն տես՝ http://www.seamewe5.com/about/seamewe-history/ (14.11.2016)

հանգույցները Բաբ ալ-Մանդեբի ավազանում պետք է տեղեկայվեն են եմենյան ալ-Հուդայդայում և Ջիբութիում[12]:

Մյուս երկու կարևոր մալուխները՝ Flag Europe Asia (FEA) և FALCON, պատկանում են մասնավոր Global Cloud Xchange կազմակերպությանը: Եվրոպան Ասիային կապող FEA-ն իր երկարությամբ երկրորդ ստորջրյա մալուխն է՝ մոտ 28000 կմ: Բաբ Ալ-Մանդեբի նեղուցին մոտակա ցամաքային հանգույցը նույնպես գտնվում է սաուդական Ջեդդայում[13]: FALCON -ը (երկարությունը՝ մոտ 10000 կմ) կապում է եգիպտական Սուեզը հնդկական Մումբայի հետ: Այս մալուխի կարևուրություններից է նաև այն, որ վերջինս պարուրում է Արաբական թերակղզին և ծառայում է հեռահաղորդակցության մալուխ նաև Ծոցի երկրների համար: Բաբ Ալ-Մանբեդի մոտակա ցամաքային հանգույցը գտնվում է եմենյան Ալ-Հուդայդայում[14]:

SEACOM/Tata TGN-Eurasia մալուխը (երկարությունը՝ մոտ 15000 կմ) Եգիպտոսից անցնում է Բաբ Ալ-Մանդեբի նեղուցով՝ մի մասով միանալով հնդկական Մումբային, իսկ մյուս մասով իջնելով դեպի Հարավ Աֆրիկյան Հանրապետություն: Այս մալուխի ցամաքային հանգույցներից մեկը գտնվում է Ջիբութիում[15]:

Հնդկաստան – Մերձավոր Արևելք – Արևմտյան Եվրոպա (IMEWE) մալուխը (երկարությունը՝ մոտ 12000 կմ), կապում է Մարսելը Մումբայի հետ: Այս մալուխի 9 ցամաքային

[12] Մանրամասն տես՝ http://www.submarinecablemap.com/#/submarine-cable/seamewe-5 (14.11.2016)
[13] Մանրամասն տես՝ http://globalcloudxchange.com/our-network/#fea (15.11.2016)
[14] Մանրամասն տե՛ս՝ http://globalcloudxchange.com/our-network/#falcon (15.11.2016)
[15] Մանրամասն տե՛ս՝ http://www.submarinecablemap.com/#/submarine-cable/seacomtata-tgn-eurasia (14.11.2016)

հանգույցներից Բաբ Ալ-Մանդեբի նեղուցին ամենամոտ գտնվողը սաուդական Ջեդդայում է[16]:

Բաբ Ալ-Մանդեբի նեղուցով անցնող մեկ այլ խոշոր ցանց է «Եվրոպա-Հնդկաստան դարպասներ» (EUROPE INDIA GATEWAY) կոչվող մալուխը, որի երկարությունը մոտ 15000 կմ է, իսկ հզորությունը՝ 3.84Tbps: Դրա ցամաքային հանգույցներից մեկը գտնվում է Ջիբութիյում[17]:

<u>Բաբ ալ-Մանդեբի նեղուցի շուրջ կենտրոնացած ուժերը</u>

Վերը թվարկվածը ակնհայտորեն ցույց է տալիս, թե հեռահաղորդակցության և ապրանքաշրջանառության տեսանկյունից որքան կարևոր հանգույց է Բաբ Ալ-Մանդեբի նեղուցը: Արդյունքում մեծանում է նեղուցին հարող պետությունների դերն ու նշանակությունը թե տարածաշրջանային, և թե արտատարածաշրջանային խաղացողների համար:

Բաբ Ալ-Մանդեբի նեղուցի առափնյա երեք երկրներն են Եմենը, Ջիբութին և Էրիթրեան, այս շարքին կարելի է ավելացնել Սոմալին, որի ջրերի անվտանգությունը անմիջապես ազդում է նեղուցի անխափան շահագործման վրա:

<u>Առափնյա երկրներ</u>

<u>Եմենը</u> վերջին մի քանի տասնամյակներին գտնվում է անընդհատ անկայուն իրավիճակում: 2003 թվականին ԱՄՆ-ի ներխուժումը Իրաք Մերձավոր Արևելքում նոր իրավիճակ ստեղծեց, ինչը նաև բերեց ներեմենյան ստատուս քվոյի

[16] Մանրամասն տե՛ս՝ https://imewecable.com/aboutus.jsp (14.11.2016)
[17] Մանրամասն տե՛ս՝ https://www.europeindiagateway.com /webclient/common/html/aboutus.html (14.11.2016)

խախտվելուն: Հուսիները, որոնք հիմնականում բնակվում են Եմենի հյուսիսում և դավանում են զեյդիականություն[18], սկզբնական շրջանում վահաբիներից, սալաֆիներից և արևմտյան ազդեցությունից իրենց կրոնական և մշակութային արժեքները պաշտպանելու գործունեություն էին ծավալում, սակայն 2004 թվականին եմենյան իշխանությունները փորձեցին ձերբակալել Հուսեյն Բադր ալ-Դին Հուսիին, որը իշխանությունների և հուսիների միջև առճակատման պատճառ դարձավ: Ընդհանուր առմամբ Եմենի այն ժամանակվա իշխանությունների (Ալի Աբու Սալեհի վարչակազմի) և հուսիների միջև ռազմական վեց լուրջ բախում տեղի ունեցան, որոնք սառեցվեցին 2010 թվականի զինադադարով[19]:

Հուսիական խնդիրը եմենյան ներքին կյանքում նորից սրվում է 2014 թվականին՝ 2010 թվականից Հյուսիսային Աֆրիկան և Մերձավոր Արևելքը ցնցող տրանսֆորմացիոն գործընթացներով պայմանավորված: 2014 թվականի սեպտեմբերին հուսիական զինված խմբերին հաջողվում է գրավել մայրաքաղաք Սանան, իսկ 2015 թվականի հունվարին կարողանում են իրենց վերահսկողությունը սահմանել նախագահական պալատի և մի քանի այլ ռազմավարական կարևոր օբյեկտների վրա՝ փաստացի սահմանափակելով երկրի նախագահ Հադիի և կառավարության

[18] Զեյդիականությունը շիա իսլամի ուղղություններից է: Այս ուղղության հետևորդները իմամ են ճանաչում Զեյդ իբն Ալիին: Զեյդիական գաղափարախոսության առանցքային գաղափարներից է «սուր ձեռքին պայքարելը» զեյդիականությունը տարածելու համար: Զեյդիական իմամաթը Եմենում գոյատևել է մինչև 1962 թվականի հեղափոխությունը: Եմենի հյուսիսում նրանց կարևոր կենտրոններն են Սաադան, Հաջջան և Դամմարը: Ավելի մանրամասն տես՝ Ислам: Энциклопедический словарь / под ред. С.М.Прозорова, М.: «Наука» Главная редакция восточной литературы, 1991. стр 73-74.

[19] Եմենահուսիական բախումների մասին տե՛ս՝ Salmoni B., Loidolt B., Wells M., Regime and Periphery in Northern Yemen: The Huthi Phenomenon, RAND, 2010.

լիազորությունները: 2015 թվականի մարտին ներեմենյան ճգնաժամին միջամտում է Սաուդյան Արաբիայի գլխավորած հիմնականում սուննիական մուսուլմանական երկրներից կազմված կոալիցիան, որը սկսում է օդային հարվածներ հասցնել հուսիական թիրախներին:

Իրանի կողմից աջակցություն ստացող հուսիներին հաջողվում է իրենց վերահսկողությունը սահմանել Եմենի հյուսիս-արևմտյան և արևմտյան հատվածների վրա՝ ազդեցություն ունենալով Բաբ Ալ-Մանդեբի նեղուցի վրա: Սակայն 2015 թվականի հոկտեմբերին սաուդական կոալիցիայի աջակցությամբ Եմենի միջազգայնորեն ճանաչված նախագահ Հադիի իշխանական ուժերը կարողացան վերանվաճել Բարիմ կղզին՝ զրկելով հուսիներին Բաբ Ալ-Մանդեբի հանդեպ վերահսկողությունից[20]: Փաստացի պետք է ընդունել, որ Բաբ Ալ-Մանդեբ նեղուցի արևելյան հատվածը վերահսկվում է Սաուդյան Արաբիայի կողմից:

Բաբ Ալ-Մանբեդի արևմտյան հատվածը վերահսկվում է ***Էրիթրեայի և Ջիբութիի*** կողմից, որոնց միջև սահմանային խնդիրները, ինչպես նաև առափնյա կղզիների և ռազմավարական բարձունքների հանդեպ վերահսկողությունը լուրջ բախումների առիթ են դառնում: Երկու երկրների միջև վերջին նման առճակատումը գրանցվել է 2008 թվականին՝ Ռաս Դումեյրա կոչվող սահմանային բարձունքի հանդեպ Էրիթրեայի հավակնություններից հետո[21]: Այս բարձունքը ռազմավարական

[20] Shay Sh., The Bab El Mandab strait and the Houthi threat, October 2016, էջ 2 http://www.herzliyaconference.org/_Uploads/dbsAttachedFiles/BabalMandabstraitandHouthithreat_Shay_19_10_16.pdf (14.11.2016)

[21] Տես Mesfin B., The Eritrea-Djibouti border dispute, Institute for Security Studies, Situation Report, 2008

նշանակություն ունի Բաբ Ալ-Մանդեբի նեղուցի նավարկելի հատվածի անվտանգության ապահովման տեսանկյունից:

Էրիթրեայի կողմից Կարմիր ծովում գտնվող եմենյան Մեծ Հանիշ կղզու[22] հանդեպ տարածքային հավակնությունները1995 թվականին եռօրյա ռազմական գործողությունների պատճառ դարձան: Ի վերջո, «Միջնորդ Դատարանի Մշտական Պալատ»-ը վերահաստատեց կղզու եմենյան պատկանելիությունը:

Ջիբութիի ռազմավարական նշանակությունը Բաբ Ալ-Մանդեբի նեղուցի հանդեպ վերահսկողության սահմանման տեսանկյունից ստեղծել է մի իրավիճակ, որում թե տարածաշրջանային և թե արտատարածաշրջանային խաղացողները ձգտում են իրենց ներկայությունը կամ ազդեցությունը ապահովել Ջիբութիյում: Բաբ Ալ-Մանդեբի նեղուցի հանդեպ վերահսկողություն ապահովելու տեսանկյունից Ջիբութին դարձել է ամենակարևոր հանգույցը: Վերջին երկու տասնամյակի ընթացքում ռազմավարական նման փոփոխությունների համար որպես պատճառ կարելի է առանձնացնել 1998-2000թթ եթովպաէրիթրեական պատերազմները, Եթովպիայի արագ տնտեսական փոփոխությունները, ԱՄՆ ռազմավարությունը Աֆրիկայում և Արաբական թերակղզում սեպտեմբերի 11 –ի դեպքերից հետո, ինչպես նաև ծովահենության խնդիրը Ադենի ծոցում և Սոմալիի տարածքային ջրերում:

2009 թվականից Ջիբութին հանդիսանում է EUNAVFOR Atalanta Եվրամիության առաքելության օպերատիվ կայանը: EUNAVFOR Atalanta-ն Եվրամիության իրականացրած առաջին

[22] Կղզին ռազմավարական առավելություն ունի Բաբ Ալ-Մանդեբի նեղուցի հանդեպ

միասնական ծովային գործողությունն է, որը ԵՄ Ընդհանուր անվտանգության և պաշտպանության քաղաքականության մի մասն է[23]: Ջիբութիում ԵՄ ծովային ուժերը համատեղ օգտագործում են նաև Ֆրանսիայի և ԱՄՆ ռազմական ենթակառուցվածքները: 2012 թվականին ԵՄ-ը գործադրեց EUCAP Nestor առաքելությունը, որի շրջանակներում համալրվեցին և հզորացվեցին Ջիբութիի առափնյա պաշտպանողական և հետախուզական համակարգերը: Այս տեսանկյունից Ջիբութին կարևոր տեղ է զբաղեցնում Ադենի ծոցի ավազանում վարվող ԵՄ քաղաքականության մեջ:

Տարածաշրջանային խաղացողներ

Բաբ ալ-Մանդեբ նեղուցի ավազանում տարածաշրջանային խաղացողներից առավել առանցքային դերակատարություն ունեն Իսրայելը, Իրանը և Սաուդյան Արաբիան: Որոշակի վերապահումներով այս շարքին կարելի է ավելացնել նաև Արաբական Միացյալ Էմիրությունները, որպես սաուդական հակահուսիական կոալիցիայի անդամ:

2008 թվականին Իրանի ու Էրիթրեայի միջև ձեռք բերված համաձայնությամբ Թեհրանը ռազմական ներկայություն է ունենալու Ասսաբում[24]: Ասսաբը մոտ է գտնվում Էրիթրեաջիբութիական սահմանին՝ Ջիբութիում տեղակայված ֆրանսիական և ամերիկյան խոշորագույն ռազմաբազաներից ոչ շատ հեռու և անմիջապես Բաբ Ալ-Մանդեբ նեղուցի հարևանությամբ, ինչը հնարավորություն է տալիս վերահսկել նեղուցի մուտքն ու ելքը:

[23] Մանրամասն տե՛ս http://eunavfor.eu/ (14.11.2016)

[24] Srtatfor, Eritrea: Another Venue for the Iran-Israel Rivalry, December 11, 2012

2012 թվականին Իրանը կարողացել է նաև Սուդանի հետ փոխադարձ համաձայնության գալ Պորտ Սուդանի նավահանգիստը իր ռազմական նավերի սպասարկման համար օգտագործելու շուրջ [25]:

Մերձավոր Արևելքի իր հիմնական հակառակորդի հետ ուժերը հակակշռելու համար Իսրայելը ավանդաբար զարգացնում է իր հարաբերությունները Եթովպիայի և Էրիթրեայի հետ: Արդյունքում, Իսրայելը ռազմական ներկայություն ունի էրիթրեական Դահլակ կղզյակների խմբում և Մասավա նավահանգստում, ինչպես նաև շահագործում է Էրիթրեայի ամենաբարձր լեռան՝ Ամբա Սոյրայի վրա տեղակայված ռադիոհետախուզական կայանը, ինչը թույլ է տալիս մշտադիտարկել հարևան Սաուդյան Արաբիայի, Սուդանի, Ջիբութիի, Եմենի տարածքները և Բաբ Ալ-Մանդեբ նեղուցի և Ադենի ծոցի ավազանները[26]՝ հնարավորություն տալով Իսրայելին ունենալ ռազմավարական և տակտիկական առավելություն:

2016 թվականի հուլիսին Իսրայելի վարչապետ Բ. Նեթանյահուն վերջին 30 տարվա ընթացքում առաջին անգամ եռօրյա այցով եղավ աֆրիկյան չորս պետություններում՝ Եթովպիայում, Քենիայում, Ուգանդայում և Ռուանդայում: Սա իր հերթին խոսում է Իսրայելի քաղաքականության աֆրիկյան վեկտորի կարևորության մասին: Մեր ուսումնասիրության նյութի տեսանկյունից կարևոր է իսրայելաեթովպական քաղաքական և տնտեսական հարաբերությունների խորացմանը միտված

[25] Paraszczuk J., Khartoum allowing Iran to establish Red Sea base, 12/11/2012 http://www.jpost.com/Iranian-Threat/News/Khartoum-allowing-Iran-to-establish-Red-Sea-base (18.11.2016)

[26] Srtatfor, Eritrea: Another Venue for the Iran-Israel Rivalry, December 11, 2012

համաձայնագրերի կնքումը, որն էլ ավելի է ուժեղացնում Իսրայելի դիրքը Աֆրիկյան եղջյուրի շրջանում[27]:

Սաուդյան Արաբիան Կարմիր ծովի ավազանի ազդեցիկ խաղացողներից մեկն է: Ներքաշվելով եմենյան ճգնաժամի մեջ՝ Սաուդյան Արաբիան փորձում է ավելի մեծացել իր դերը տարածաշրջանում՝ հավասարակշռելու կամ դուրս մղելու համար Իրանին: Նաև այս համատեքստում է պետք դիտարկել սաուդական կոալիցիայի երկրների (հատկապես ԱՄԷ) ներգրավվածությունը Բաբ Ալ-Մանդեբի նեղուցի շուրջ ծավալվող աշխարհաքաղաքական իրադարձություններում:

2015 թվականի մայիսին Ալ-Ռիադն ու Աբու Դաբին Էրիթրեայի հետ կնքել են ռազմական ոլորտում անվտանգության ապահովմանը միտված համաձայնագիր, որով Էրիթրեան թույլատրում է Ծոցի կոալիցիոն ուժերին օգտագործել իր օդային, ցամաքային և տարածքային ջրերը Եմենում գործողություններ իրականացնելու համար: Նույն Ասսաբ նավահանգիստը ակտիվորեն օգտագործվում է ԱՄԷ-ի կողմից եմենյան ճակատ ցամաքային ուժեր տեղափոխելու համար[28]: Ինչպես նշվեց այս ուժերն էին, որ հուսիներից վերանվաճեցին Բերիմ կղզին և ապահովեցին Բաբ ալ-Մանդեբի ծովային ուղու անվտանգությունը:

---

[27] Մանրամասն տես Ziri D., Netanyahu meets with African leaders on sidelines of UNGA, talks Israeli innovations 09/23/2016 http://www.jpost.com/Israel-News/Benjamin-Netanyahu/Netanyahu-meets-with-African-leaders-on-sidelines-of-UNGA-talks-Israeli-innovations-468511 (18.11.2016) և Yasiin F., Israeli Penetration into East Africa Objectives and Risks, 24 October 2016, http://studies.aljazeera.net/en/ reports/2016/09/israeli-penetration-east-africa-objectives-risks-160929102604246.html (18.11.2016)

[28] Shay Sh., The Battle over the Bab al Mandab Straits, 9/10/2016, http://www.israeldefense.co.il/en/content/battle-over-bab-al-mandab-straits (05.11.2016) տես նաև Satellite Imagery: The UAE Expands Its Military Reach, 9.12.2016, https://www.stratfor.com/video/satellite-imagery-uae-expands-its-military-reach (11.12.2016)

Վերը նշվածից կարելի է եզրակացնել, որ տարածաշրջանային խաղացողների համար Կարմիր ծովի միջին և հարավային հատվածում, ինչպես նաև Բաբ Ալ-Մանդեբի նեղուցի հատվածում իրենց շահերը իրացնելու համար հիմնական հենակետ է ծառայում Էրիթրեան: Հենց այստեղ են կուտակված իրար հակադիր շահեր ունեցող այնպիսի երկրներ, ինչպիսիք են Իրանը, Իսրայելը և Սաուդյան Արաբիան՝ իր կոալիցիոն գործընկերներով, վերջիններս նաև լուրջ ներկայություն ունեն եմենյան ափում:

Արտատարածաշրջանային խաղացողներ

Բաբ Ալ-Մանդեբի նեղուցի և, մասնավորապես, նեղուցի հարևանությամբ գտնվող Ջիբութիի վրա լուրջ ազդեցություն ունեցող արտատարածաշրջանային դերակատարներից առաջինը կարելի է առանձնացնել ***Ֆրանսիային***, որը հանդիսանում է Ջիբութիի անվտանգության և տարածքային ամբողջականության արտաքին երաշխավորը, ինչն ամրագրված է 1977 թվականին երկու երկրների միջև կնքված պայմանագրով:

2011 թվականին Ֆրանսիան և Ջիբութին վերահաստատեցին իրենց հարաբերությունները և կնքեցին Պաշտպանության ոլորտում համագործակցության պայմանագիր, որը ուժի մեջ է մտել 2014 թվականին[29]: Պայմանագիրը հնարավորություն է տալիս Ֆրանսիային Ջիբութիում տեղակայել մոտ 1900 զինվորական: Այդ նույն պայմանագրով Ֆրանսիան Ջիբութիին տարեկան վճարում է 30 մլն եվրո իր ռազմական ներկայության դիմաց[30]: Ֆրանսիական զինվորականներից 1400–ը տեղակայված են Քեմպ Մոնկլար

[29] France and Djibouti, http://www.diplomatie.gouv.fr/en/country-files/djibouti/france-and-djibouti/ (05.12.2016)

[30] Նույն տեղում

կայանում, որը գտնվում է Ջիբութի քաղաքի միջազգային օդանավակայանի և Քեմպ Լեմոնիեր կայանի ամերիկյան ռազմական հզորությունների միջև: Մոտ 500 զինվորական մշտապես գտնվում են, հերթափոխում և շրջում են Ֆրանսիայի և տարածաշրջանի այլ ռազմակայանների միջև: 2011 թվականի պայմանագրով փոխվեց նաև Ջիբութիում 1960-ականներից գտնվող Ֆրանսիական Արտասահմանյան Լեգեոնի 13-րդ կիսաբրիգադի կարգավիճակը, որը տեղափոխվեց Աբու Դաբի: Փոխարենը Քեմպ Մոնկլարում տեղակայված զորախումբը համալրվեց օդուժի և ծովային ուժերի առանձին ստորաբաժանումներով: Ֆրանսիան դիտակետեր է շահագործում նաև Ջիբութիի ծովային սահմանի երկայնքով՝ Ռաս Դումեյրայի և Ռաս Բիր հրվանդանների տարածքում[31]: Պետք է նշել նաև, որ ԱՄՆ-ն ու Ֆրանսիան 2012 թվականին հինգ տարի ժամկետով Ջիբութիում տեղակայված իրենց զորախմբերի միջև փոխօգնության և համագործակցության մասին համաձայնագիր են կնքել :

Ջիբութիում տեղակայված ֆրանսիական զինվորականները ուսուցանում և տեխնիկական աջակցություն են ցուցաբերում ինչպես ջիբութական ռազմական ուժերին, այնպես էլ Սոմալիի Անցումային Դաշնային կառավարության մարտիկներին[32]:

Իր դերակատարությամբ մյուս կարևոր արտատարածաշրջանային խաղացողը ***Ամերիկայի Միացյալ Նահանգներն*** են: Բաբ Ալ-Մանդեբի նեղուցը ԱՄՆ 5-րդ նավատորմի վերահսկողության գոտու մեջ է: Չնայած Ծոցում

[31] Մանրամասն տե՛ս Styan D., Djibouti: Changing Influence in the Horn's Strategic Hub, April 2013 https://www.chathamhouse.org/sites/files/chathamhouse/public/Research/Africa/0413bp_djibouti.pdf (25.11.2016)

[32] Djibouti: Scenesetter on security issues for asd vershbow, January 2010, https://wikileaks.org/plusd/cables/10DJIBOUTI37_a.html (05.12.2016)

ամերիկյան 5-րդ նավատորմի պատկառելի ներկայությանը՝ ԱՄՆ 2001 թվականից ընդլայնել է իր ներկայությունը Աֆրիկայի Եղջյուրի շրջանում՝ ստեղծելով իր առաջին և միակ ռազմակայանը Աֆրիկայում (Ջիբութիում)։ Ամերիկյան զորախմբի հիմնական կայանատեղին Քամփ Լեմոնիերն է, որը համատեղ օգտագործվում է ֆրանսիացիների հետ։ Ըստ տարբեր տվյալների ավելի քան 4000 ԱՄՆ զինվորականներ են գտնվում Ջիբութիում[33]։ Բացի ռազմաբազայից՝ Ջիբութիում են տեղակայված ԱՄՆ կառավարության կարևոր ռադիոհեռարձակման հզորությունները, որոնք օգտագործվում են «Ռադիո Սավա» արաբալեզու կայանի և Ամերկայի ձայնի Սոմալիական ծառայության կողմից։ Այստեղ է գտնվում նաև ԱՄՆ ՄԶԳ «Սնունդ հանուն խաղաղության» ծրագրի պահեստները, որոնք նախատեսված են արտակարգ իրավիճակների համար, ինչպես նաև վառելիքի վերալիցքավորման ծովային կայանը ԱՄՆ և կոալիցիոն նավերի համար[34]։

2009 թվականին Ջիբութիի և ԱՄՆ-ի միջև թարմացվել է Քամփ Լեմոնիերի շահագործման պայմանագիրը մինչև 2014 թվական, որից հետո ԱՄՆ դեսպանատունը անվտանգությանը աջակցող ծրագրեր է իրականացրել։ Այս ծրագրերի նպատակն է եղել ուժեղացնել Ջիբութիի ծովային և առափնյա ենթակառուցվածքները։ Այդ ծրագրերի շրջանակում վերազինվել է Օբոկի նավահանգիստը, թարմացվել են ծովային պարեկային նավերն, շահագործման է հանձնվել Ջիբութիի ծովային ուժերի առափնյա ռադարների համակարգը։ Բացի այդ, ռադիոակտիվ նյութերի տեղափոխությունը կանխելու համար Ջիբութիի

[33] Djibouti, http://www.globalsecurity.org/military/facility/djibouti.htm (05.12.2016)
[34] Djibouti: Scenesetter on security issues for asd vershbow, January 2010, https://wikileaks.org/plusd/cables/10DJIBOUTI37_a.html (05.12.2016)

հիմնական նավահանգստային տերմինալներում տեղադրվել են համապատասխան սենսորային սարքեր: Վաշինգթոնի կողմից Ջիբութիի ավելի քան 50 մլն ԱՄՆ դոլարի ներդրում է կատարվել ծովային ենթակառուցվածքները վերազինելու համար[35]:

2014 թվականին Ամերիկայի Միացյալ Նահանգները վերակնքեցին Ջիբութիի հետ ռազմակայանի շահագործման պայմանագիրը՝ երկարացնելով ժամկետը ևս 20 տարով՝ տարեկան 70 մլն ԱՄՆ դոլար վճարելու պայմանով[36]: Նոր համաձայնության ներքո ԱՄՆ քայլեր ձեռնարկեց ընդլայնելու իր ռազմական ներկայությունը Ջիբութիում: Մասնավորապես, Ամերիկայի Միացյալ Նահանգները Ջիբութի մայրաքաղաքից 10 կմ հեռավորության վրա ստեղծեց Չեբիլի օդուժի կայանատեղին, որը ամերիկյան տարատեսակ ԱԹՍ-ների խոշոր կայանատեղի է[37]: Փորձագետների կարծիքով, Չեբիլի կայանում գտնվող ԱԹՍ-ները Միացյալ Նահանգներին հնարավորություն են տալիս ծածկել Եմենը, Սաուդյան Արաբիայի հարավ-արևմտյան հատվածը, Սոմալիի զգալի մասը, Եթովպիայի մի մեծ մասը, ինչպես նաև հարավային Եգիպտոսը[38]:

Բաբ Ալ-Մանդեբի նեղուցի և ավազանի ռազմավարական նշանակությունը անտարբեր չի թողնում նաև արտատարածաշրջանային մյուս գլոբալ խաղացողներին: Ջիբութիի և Աֆրիկայի կենտրոնի խորքային երկրների հանդեպ

---

[35] Նույն տեղում

[36] Wood J., Djibouti, a safe harbour in the troubled Horn of Africa, June, 2015, http://www.thenational.ae/world/africa/djibouti-a-safe-harbour-in-the-troubled-horn-of-africa (05.12.2016)

[37] Turse N., The stealth expansion of a secret u.s. drone base in africa, October 2015, https://theintercept.com/2015/10/21/stealth-expansion-of-secret-us-drone-base-in-africa/ (01.12.2016)

[38] Նույն տեղում

չինական հետաքրքրությունը չափվում է 200 մլրդ. հասնող ներդրումային ծրագրերով: Այս ներդրումները պաշտպանելու և Բաբ Ալ-Մանդեբի տրանսպորտային հանգույցը իր ապրանքաշրջանառության համար անվտանգ դարձնելու համար՝ Չինաստանը Ջիբութիի հետ համաձայնության է եկել ռազմական ներկայություն ունենալ վերջինիս տարածքում: Ըստ համաձայնագրի այս վարձակալությունը Չինաստանին տարեկան կարժենա մոտ 100 մլն. ԱՄՆ դոլար[39]: Չինական ռազմաբազան տեղակայված է Օբոկի շրջակայքում, որում նախատեսված է ունենալ թռիչքուղի[40]: Ինչպես նշվել է արդեն, այս շրջանում է գտնվում նաև ֆրանսիական և ամերիկյան զինվորների փոքրաթիվ կայանը: Այս շրջանի անմիջական հարևանությամբ է գտնվում Թադջուրայի ծոցը, որտեղ գտնվում են Ջիբութիի հիմնական առևտրային նավահանգիստները: Նշենք նաև, որ Թադջուրայի ծոցում է գտնվում նաև ռուսական որոշակի ռազմածովային ուժերի ներկայություն, որոնք մասնակցում են հակածովահենային պայքարին Ադենի ծոցում[41]:

Ադենի ծոցի հակածովահենային գործողություններին մասնակցում է նաև Ճապոնիան, որը Բաբ Ալ-Մանդեբի նեղուցի անվտանգության ապահովման հիմնական շահախնդիր կողմերից մեկն է նաև: Ըստ տարբեր հաշվարկների, Բաբ Ալ-Մանդեբի նեղուցով անցնող միջազգային ապրանքափոխադրման ողջ

[39] Oladipo T., Why are there so many military bases in Djibouti?, June 2015 http://www.bbc.com/news/world-africa-33115502 (06.12.2016)
[40] Gould J., China's Djibouti Ambitions a Sign of the Future, May, 2015, http://www.defensenews.com/story/defense/international/mideast-africa/2015/05/16/analyst-chinas-djibouti-ambitions-a-sign-of-the-future/27371513/ (04.12.2016)
[41] Kantai P., Smith P., Djibouti, where global praetorians gather, January 2015, http://www.theafricareport.com/East-Horn-Africa/djibouti-where-global-praetorians-gather.html#ixzz4TPQh1Ry4 (05.12.2016)

ծավալի մոտ 10 %-ը ճապոնական ապրանքներն են, (այդ թվում ճապոնական ավտոմեքենաների արտահանման ողջ ծավալը դեպի Եվրոպա)[42]: Ճապոնական ռազմական ներկայությունը մոտ 600 հոգի է, որոնք տեղակայված են Քեմփ Լեմոնիերում ամերիկյան ռազմաբազայի հարևանությամբ և համատեղ օգտագործում են որոշ ենթակառուցվածքներ[43]

Ամփոփելով Բաբ Ալ-Մանդեբ նեղուցի շուրջ զարգացող իրադարձությունները՝ կարելի է եզրակացնել հետևյալը՝

• Բաբ Ալ-Մանդեբ նեղուցը՝ որպես կոմունիկացիոն միջանցք, որը Եվրոպայի և Ասիայի միջև ապրանքաշրջանառության հիմնական հանգույցն է, շարունակելու է պահպանել իր ռազմավարական նշանակությունը՝ բարձրացնելով նեղուցի առափնյա երկրների՝ Ջիբութիի, Էրիթրեայի և Եմենի կարևորությունը ինչպես տարածաշրջանային, այնպես էլ արտատարածաշրջանային խաղացողների համար:

• Բաբ Ալ-Մանդեբ նեղուցի առափնյա երկրներից Եմենը վերջին երկու տասնամյակում գտնվում է անընդհատ ցնցումների մեջ, իսկ ներկա փուլում վերածվել է տարածաշրջանային խաղացողների՝ Սաուդյան Արաբիայի և Իրանի առճակատման հարթակի: Նեղուցի հանդեպ եմենյան ափի կողմից իրանական վերահսկողությունը թույլ չտալու նպատակով՝ Սաուդյան Արաբիան իր կոալիցիոն գործընկերների հետ իր վերահսկողությունն է սահմանել Բարիմ կղզիների հանդեպ: Առաջիկայում այդ վերահսկողության պահպանումը լինելու է Եմենի ճգնաժամում սաուդցիների ներգրավման հիմնական

[42] Djibouti: Scenesetter on security issues for asd vershbow, January 2010, https://wikileaks.org/plusd/cables/10DJIBOUTI37_a.html (05.12.2016)

[43] Styan D., Djibouti: Changing Influence in the Horn's Strategic Hub, April 2013 https://www.chathamhouse.org/sites/files/chathamhouse/public/Research/Africa/0413bp_djibouti.pdf (25.11.2016)

խնդիրներից մեկը։ Այս տեսանկյունից կարելի է ասել, որ սաուդցիները վերահսկում են Կարմիր ծովի գրեթե ամբողջ արևելյան ափը, որտեղ տեղակայված են ստորջրյա կոմունիկացիոն մալուխների հիմնական ցամաքային հանգույցները (Ջեդդա, Ալ-Հուդայդա)։ Հատկանշական է, որ մասնավոր Global Cloud Xchange կազմակերպության կողմից շահագործվող այս մալուխների ցամաքային հանգույցները գտնվում են Կարմիր ծովի արևելյան ափին։

• Հետաքրքիր դերակատարություն են ձեռք բերում Բաբ Ալ-Մանդեբի առափնյա մյուս երկու պետությունները՝ Ջիբութին և Էրիթրեան։ Հետազոտությունը ցույց է տալիս, որ տարածաշրջանային խաղացողները, որոնք փորձում են իրենց ազդեցությունը ունենալ այս նեղուցի վրա, հիմնականում համագործակցում են Էրիթրեայի հետ (Իրան, Իսրայել), իսկ արտատարածաշրջանային խաղացողների համար հիմնական գործընկեր է հանդիսանում Ջիբութին, որի մոտ 22 հազ. կմ² մակերեսի վրա կենտրոնացած են ԱՄՆ-ի, Ֆրանսիայի, Չինաստանի և Ճապոնիայի ռազմաբազաները։ Այս ցուցակին կարելի է նաև ավելացնել Ռուսաստանը իր ռազմանավերով, որոնք ըստ համաձայնության սպասարկվում են Ջիբութիի նավահանգիստներում։

• Հաշվի առնելով Ջիբութիի և Էրիթրեայի միջև չլուծված տարածքային խնդիրները և տարածաշրջանային ու արտատարածաշրջանային ուժերի վերը նշված բաշխվածությունը՝ պետք է ակնկալել, որ հերթական «խցանումը» «Երեք ծովերի համակարգում» լինելու է Բաբ Ալ-Մանդեբի շրջանում՝ արտահայտված Էրիթրեաջիբութիական հակասությունների սրման առերևույթ դրսևորմամբ, հնարավոր է նաև ռազմական բախումներ։

• Խորհրդային Միության փլուզումից հետո Ռուսաստանը կորցրել է իր ազդեցությունը այս տարածաշրջանում և կարողացել է լուծել իր նավերի սպասարկման խնդիրը միայն: Պետք է ակնկալել, որ Ռուսաստանը փորձեր է անելու նախաձեռնել գործողություններ իր ներկայությունը Բաբ Ալ-Մանդեբի ավազանում հաստատելու համար:

ВАЖНОСТЬ БАБ-ЭЛЬ-МАНДЕБСКОГО ПРОЛИВА В «СИСТЕМЕ ТРЕХ МОРЕЙ»

Айк Кочарян
hkocharyan@ysu.am

Ключевые слова՝ *Баб-эль-Мандеб, «Система Трех морей», углеводородные ресурсы, подводный коммуникационный кабель, Джибути, Камп Лемониер, БПЛ*

В контексте транспортировки углеводородных ресурсов Баб-эль-Мандебский пролив занимает третье место после Малаккского и Ормузского проливов. В данной статье исследуются коммуникационные возможности Баб-эль-Мандебского пролива, их важность и значение в свете теории «Системы Трех морей».

Исследование роли и действия региональных и внерегиональных игроков в бассейне Баб-эль-Мандебского пролива позволяет прогнозировать возможность нарастания напряжённости и, даже, опосредованного выяснения отношений вовлечённых игроков, которое может привести к открытому конфликту между Эритреей и Джибути.

THE IMPORTANCE OF BAB-EL-MANDEB IN THE CONTEXT OF "THREE SEA SYSTEM"

Hayk Kocharyan
hkocharyan@ysu.am

Keyword: *Bab-el-Mandeb, "Three Sea System", hydrocarbon facilities, marine communication cables, Djibouti, Camp Lemonnier, UAV*

The Strait of Bab-el-Mandeb occupies the third place in transporting hydrocarbon resources, after the Straits of Malacca and Ormuz. The present article goes along the investigation of the comminicational capacities of the Bab-al-Mandeb, its importance and significance in the light of the "Three Seas System".

The study of the role and activities of the actors in the region, as well as outside the region in the basein of Bab-al-Mandeb allows us to foresee the possible escalation of tension, as well as the mediated ironing-out of the relations of actors engaged in the open conflict between Eritrea and Djibouti.